

պատուական կրօնաւորք՝ համրանքէս կ'անցնին . իսկ ռամիկ և հասարակ ըսուած ժողովրդէն՝ համրելը աւելորդ կը սեպեմ :

Տարուէ տարի ասանկ հունձեր տեսնելով , մտքէս շատ մտածմունքներ կ'անցնին . ասոնցմէ մէկ երկուքը ըսեմ , որ կարդացողը հետաքրքրու թեամբ նայելով վրայ բերէ , թէ իմ մտքէս ալ կ'անցնին ատոնք :

Ա . Մէյմը , թէ աս ինչ անթիւ հունձք է , և աս ինչ արագութեամբ երկրիս երեսէն անցնիլ է : Մտածմունքս չեմ երկընցըներ , դ՛ու հետևյուր :

Բ . Ըս ինչ տեսակ բաղդ է մահը՝ որ ամէն վիճակ իրարու կը հաւասարցնէ . Շուեօտի թագաւորն ալ , կայսերաց ազգակիցներն ալ , մուրացկաններուն տնանկներուն հետ հաւասար իջևան մը կ'երթան գերեզմանը , և խռով չեն :

Գ . Ինչ զարմանալի բան է որ Սէնթ-Վլէրի ու Պիւրնուֆի պէս հետաքնին իմաստնոց հաւասար՝ տրգէտ գեղացին ալ կ'ելլէ աշխարհքէս , և երկուքին աչքն ալ մէկտեղ կը բացուին բուն ճշմարտութիւնը տեսնելու :

Դ . Ըս ինչ աննման պատահմունք է հասակաց , որ Տիւսէրբլ 114 տարուան զառամին հետ՝ քանի մը տարուան , քանի մը օրուան , քանի մը ժամուան տղաք ալ ուղեկից կ'ըլլան , որ հազիւ շունչ մը ձգեցին երկրիս վրայ , հազիւ օրուան արևը տեսան ու անկէ շուտ վար իջան :

Ե . Ըս յափ մեռածներու վրայ՝ ծնողք , ազգականք , սիրելիք , ինչ յոյսեր ունէին , ինչ ցաւեր ունեցան . քանի ծիծաղկոտ երեսներ արցունքի լիճ դարձան . քանի ցեղերու ճրագներ մարեցան , և այլն և այլն :

Զ . Հապա աս մեր երկրէն ելողները հիմա ո՛ր են . անոնց մարմինը ամէնքը հաւասար մէկ հող է ոտուրներնու տակը . բայց հողինին . հասան արդեօք իրենց բուն յաւիտե-

նական վախճանին , թէ . . .

Է . Սերջապէս ասոնց նման շատ բաներ ալ մտածելէն ետև , հոս կը լմընցընեմ , թէ ես ալ մէկ հունձ մըն եմ . անցած տարուան հունձերէն բաղդով խալսեցայ , բայց կարելի է թէ աս տարուան տրցակին մէջ իմ տեղս ալ պատրաստած է . և թէ աս տարի ալ չըլլայ , ուրիշ վազուկ տարի մը պիտի գայ շուտով՝ զիս ալ պիտի խլէ , իր հազար հունձերուն մէջ պիտի խառնէ , առնէ տանի . ես ալ անցած գնացածներէն մէկը պիտի ըլլամ : Եւ ամանակակիցքս կամ յետագայք զիս պիտի յիշեն թէ չէ՝ չեմ գիտեր , չեմ ալ հոգար : Միայն նայիմ որ անանկ հունձ մը ըլլամ , որ հոս մարդկանց աչքին տակը չիյնամ ալ նէ՝ հոն իմ տնկողիս ու ստեղծողիս ու իր արիւնովը զիս փրկողիս աչքին հաճոյ բան մը ըլլամ . ան ալ՝ իր շնորհքովը և ողորմութեամբը , որն որ կը փափաքիմ նաև իմ ամէն բաղդակից և ուղեկից ընկերացս և ընթերցողաց :

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Երևի :

Ձո՞ համբէն 'ի մարդիկ  
Համարիցիս երջանիկ :  
Ձբաղմեալն 'ի գո՞ մեծասպաս ,  
Յոսկի թաթաւ ըզՍիգո՞ս ,  
Որ փափկասուն պերճաշուք  
Գրրգի բաղդին ընդ թևք .  
Թէ զհանճարեղն այր զիմաստուն խորագէտ ,  
Որ զծով զերկիր զերկինս չափէ յիւրն 'ի մէտ .  
Կամ զաշխարհի տէր զգո՞ մարտիկ  
Յոյր 'ի գրեկաց տեղան շանթիք : —  
Չեն չեն դոքա երջանիկք ,  
Այլ Բաղդին հէք խաղալիկք : —  
Բայց որ ընդ իւր գո՞ վիճակ ,  
Երկից կամայն հրպատակ ,  
Ձերեսանակ սանձէ ըզկիցն 'ի յանդորր ,  
Ոչ զըզմանայ ընդ երկեան գործն այսօր .  
Ոչ 'ի իրզճին 'ի խայթոցաց ընդոսանու ,  
Ոչ չըւայտեալ 'ի փափկութիւնս նինջ առնու :

ՓԵՆՍՈՒ ՔԵՐԵՒՈՂ ԳՊԵՆԻՅԻ :